Հավելված
«ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերության
գլխավոր տնօրենի 20 դեկտեմբերի 2024թ. թիվ 140/03-Լ հրամանի

Տոմսային կրիչի (Տրանսպորտային Քարտի) տրամադրման և օգտագործման կանոնները

1. Սահմանումներ

Ֆինանսական օպերատոր՝ «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ:

Տոմսային կրիչ/կրիչ՝ Ֆիզիկական օբյեկտ կամ ծրագրային ապահովում և ապարատային միջավայր, որը կարող է թվային ձևով պահել տեղեկատվություն տոմսերի վերաբերյալ: (**այսուհետ նաև՝ Տրանսպորտային քարտ կամ Քարտ**):

Տոմս/Էլեկտրոնային տոմս՝ Էլեկտրոնային կամ թղթային կրիչով Ուղևորության իրավունքի ձեռքբերման հավաստագիր:

Տարիֆ՝ ուղևորափոխադրման պայմանների տեսակ՝ համապատասխան սակագնով:

Տոմսային կրիչի (Տրանսպորտային Քարտի) ակտիվացում՝ Քարտի իդենտիֆիկացիոն համարով առաջին ուղետոմսի/տարիֆի ձեռքբերում:

Ուղևոր՝ Քարտը ձեռք բերելու համար հայտ ներկայացրած կամ Քարտը տիրապետող, օգտագործող անձ:

Երաշխիքային գումար՝ դրամական միջոց, որը Ուղևորը տրամադրում է Ֆինանսական օպերատորին իբրև Ֆինանսական օպերատորի՝ որպես քարտի սեփականատիրոջ իրավունքների և Քարտի օգտագործման և պահպանման կանոնների կատարման ապահովում:

2. Ընդհանուր դրույթներ

2.1. Սույն փաստաթուղթը հրապարակային պայմանագիր (օֆերտա) է:

2.2. Ֆինանսական օպերատորը Ուղևորին Քարտը տրամադրում է հայտի հիման վրա:

2.3. Քարտի ձեռքբերմամբ և օգտագործմամբ Ուղևորը հավաստում է, որ ծանոթացել է Տոմսային կրիչի (Տրանսպորտային Քարտի) տրամադրման և օգտագործման կանոններին և ընդունում է դրանք:

2.4. Յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում (կետում/կայարանում) նույն Քարտը հնարավոր է 1-ին հաջող վալիդացումից հետո վալիդացնել 2-րդ անգամ 30 րոպեից ոչ շուտ:

2.5. Քարտը Ֆինանսական օպերատորի սեփականությունն է, և Ուղևորին տրվում է տիրապետման և օգտագործման իրավունքով՝ երաշխիքային գումարի դիմաց:

2.6. Երաշխիքային գումարը կազմում է 500 ՀՀ դրամ:

2.7. Երաշխիքային գումարը ենթակա է վերադարձման Քարտի տրամադրման պահից երեք տարվա ընթացքում հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- Քարտը աշխատունակ է, հնարավոր է օգտագործել նպատակային նշանակությամբ,
- Ֆիզիկական ամբողջականությունը պահպանված է,
- Քարտի արտաքին տեսքը պատշաճ է, իդենտիֆիկացիոն համարը տեսանելի է, իսկ Քարտի ընդհանուր մաշվածությունը չի գերազանցում 50%-ը,
- Պահպանվել են Տրանսպորտային քարտի օգտագործման հիմնական կանոնները:

2.8. Երաշխիքային գումարի վերադարձի դիմում կարող է ներկայացվել Ֆինանսական օպերատորի մասնաճյուղերում: Դիմումը քննվում է 10 աշխատանքային օրվա ընթացքում, որից հետո դիմումը բավարարվում է 2.6 կետում սահմանված պայմանների առկայության դեպքում, իսկ 2.6 կետում սահմանված պայմաններից առնվազն մեկի բացակայության դեպքում դիմումը մերժվում է:

2.9. Դիմումի պատասխանը Ուղևորը ստանում է դիմումում նշված պատասխանի ստացման եղանակով (փոստային առաքում, առձեռն, էլ. փոստ): Դիմումի բավարարման դեպքում երաշխիքային գումարը փոխանցվում է Ուղևորի տրամադրած իրեն պատկանող բանկային հաշվեհամարին կամ իր Telcell Wallet էլեկտրոնային փողի հաշվառման հաշվին: Եթե Ուղևորը Կրիչով կատարել է երթ առանց Կրիչում Տարիֆի ակտիվացման, երթի սակագինը նվազեցվում է երաշխիքային գումարից:

2.10. Դիմումը մերժվելու դեպքում Ուղևորը կարող է մոտենալ դիմումը ընդունած Ֆինանսական օպերատորի մասնաճյուղ Կրիչը հետ ստանալու համար:

2.11. Քարտը ձեռք բերելուց և ակտիվացնելուց հետո Ուղևորի կողմից գործարանային խոտանի հետևանքով անաշխատունակության հայտնաբերման դեպքում ենթակա է փոխարինման մեկ այլ քարտով՝ այն ակտիվանցելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Քարտը Ֆինանսական օպերատորի ցանկացած մասնաճյուղ ներկայացնելու դեպքում: Սույն հիմքով Քարտի փոխարինումը իրականացվում է Քարտի ձեռքբերման վճարման անդորրագրի ներկայացման դեպքում:

3. Տրանսպորտային քարտի օգտագործման հիմնական կանոնները

Տրանսպորտային քարտի երկարատև և կայուն աշխատանքը ապահովելու համար պետք է հետևել հետևյալ կանոններին.

3.1. Ֆիզիկական վնասվածքից պաշտպանություն

- Խուսափել Քարտը ճկելուց, ծալելուց կամ կոտրելուց:
- Չպահել Քարտը կոշտ կամ սուր առարկաների հետ միասին, որոնք կարող են քերծել կամ վնասել այն:
- Պահպանել քարտը հատուկ պատյանի մեջ՝ ֆիզիկական վնասից խուսափելու համար:

3.2. Շրջակա միջավայրի ազդեցությունից պաշտպանություն

- Պահպանել Քարտը չոր վայրում՝ խուսափելով խոնավության և ջրի հետ անմիջական շփումից:

- Չենթարկել Քարտը բարձր ջերմաստիճանի կամ արևի ուղիղ ճառագայթների երկարատև ազդեցությանը:
- Խուսափել քարտը քիմիական նյութերի, օրինակ՝ ալկոհոլի կամ լուծիչների ազդեցությանը ենթարկելուց:

3.3. Էլեկտրամագնիսական ազդեցությունից պաշտպանություն

- Չպահել քարտը մագնիսական դաշտերի մոտ (օրինակ՝ բարձրախոսների կամ մագնիսական պայուսակների կողքին), քանի որ դա կարող է վնասել տվյալները:
- Խուսափել քարտը ուժեղ էլեկտրամագնիսական սարքավորումների մոտ օգտագործելուց:

3.4. Օգտագործման ձևը

- Հավաստիանալ, որ քարտը ճիշտ ուղղությամբ է պահվել NFC ընթերցող սարքին մոտեցնելիս:
- Քարտը ընթերցող սարքի մոտ պահել միայն այնքան ժամանակ, որքան պահանջվում է տվյալների փոխանակման համար:

3.5. Անվտանգություն

- Քարտով հավաստվող իրավունքները պատկանում են քարտը ներկայացնողին, ուստի Քարտի կորստի, գողության կամ այլ անձի կողմից քան քարտը ձեռք բերողն է օգտագործելու համար Ֆինանսական օպերատորը պատասխանտվություն չի կրում:
- Քարտի սխալ օգտագործման, գողության և կորստի ռիսկը կրում է Ուղևորը:

3.6. Քարտի խնամք

- անհարժեշտ է հավաքել ավելորդ կեղտը Քարտի մակերեևույթից՝ օգտագործելով փափուկ կտոր:
- Չի կարելի օգտագործեք սուր կամ կոշտ նյութեր քարտը մաքրելու համար: